# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

2 փետրվարի, 2023 թ. N 2 - Լ

## ՈՐՈՇՈՒՄ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Կանոնադրության 14.16.3 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության աուդիտորի և փորձագետ հաշվապահի շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների մասնակցության վճարի չափի հետևյալ տարբերակները.

ա) Պալատի անդամի և Պալատի որակավորման ծրագրի դասընթացների մասնակցի համար 1 ժամը՝ 6000 ՀՀ դրամ, *(փոփոխված 25.06.2026թ. 15-Լ որոշում)*

բ) Պալատի անդամի և Պալատի որակավորման ծրագրի դասընթացների մասնակցի համար 72000 ՀՀ դրամ՝ տվյալ տարում 20 ժամ դասընթացների մասնակցության համար: Տվյալ տարում 20 ժամից պակաս դասընթացների մասնակցության դեպքում գումարը չի վերադարձվում, *(փոփոխված 25.06.2026թ. 15-Լ որոշում)*

գ) Պալատի անդամի և Պալատի որակավորման ծրագրի դասընթացների մասնակցի համար 120000 ՀՀ դրամ՝ տվյալ տարում 40 ժամ դասընթացների

մասնակցության համար: Տվյալ տարում 40 ժամից պակաս դասընթացների մասնակցության դեպքում գումարը չի վերադարձվում, *(փոփոխված 25.06.2026թ. 15-Լ որոշում)*

դ) Պալատի ոչ անդամի համար 1 ժամը՝ 7200 ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակման պահից և գործում է 2023թ. հունվարի 1-ից:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ** **ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ**